

ԳՈՐԾԱԴԻՐ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՐԵՆ, ԱՇԽԱՏԱՆՔ՝ ԱՇԽԱՏՈՒՆԱԿՆԵՐԻՆ

ԻՐԱՎԻ ԳՐԻԲԱՑՎԻԼԻՆ ԵՐԿՎԱՅԱՐԵՅ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆՈՐ ՇՐԱԳԻՐԸ

Նոյեմբերի 22-ին Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլու նախագահությամբ անցկացվեց երկրի կառավարության հերթական նիստը:

Նիստի մեկնարկին վարչապետը, անդրադառնալով կորոնավիրուսի համավարակով պայմանավորված տնտեսական բարդություններին, մասնավորապես նշեց, որ սոցիալական քաղաքականության շրջանակներում չափահաս, աշխատունակ բնակչության մաս կազմող քաղաքացիներ, ընտելացել են աղքատությանը, գործազրկությանը, անգործությանը: Տարրական կենսապայմանները բարելավելու մոտիվացիա չունեն: Վարչապետն այս հանգամանքը բնութագրեց որպես լուրջ մտահոգություն՝ անհրաժեշտություն համարելով աղետ: Հարցի կարգավորման նպատակով, կառավարությունը պետք է համարձակ, արդյունավետ քայլեր ձեռնարկի:



- Ուզում եմ սկսել սոցիալական քաղաքականությունից: Ինչպես գիտեք, առկա սոցիալական քաղաքականությունը ցույց է տալիս, որ ներկայիս դինամիկան, միտումներն, ընդհանուր առմամբ, (Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ՐԱՅԱՍՏԱՆ

ԲԱՐՁՐ ՄԱԿԱՐԳԱԿԻ ԵՌԱԿՈՂՄ ՇԱՆԴԻՊՈՒՄ ՍՈՉԻՈՒՄ

Նոյեմբերի 26-ին Սոչիում անցկացվեցին Ռուսաստանի նախագահի վարչապետ Պուտինի, Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի և Ադրբեյջանի նախագահ Իլհամ Ալիևի բանակցությունները:



Բարձր մակարդակի եռակողմ հանդիպումն անցկացվում է Ռուսաստանի նախագահի նախաձեռնությամբ և Եվրոպայի և Լեռնային Ղարաբաղի հակամարտության գոտում հրադադարի մասին հայտարարության ստորագրմամբ: Բանակցությունների ընթացքում կողմերը քննարկեցին 2020 թվականի նոյեմբերի 9-ին և 2021 թվականի հունվարի 11-ին ձեռք

բերված պայմանավորվածությունները, ինչպես նաև կանխագծվեցին հաջորդ քայլերը, որոնք պետք է նպաստեն տարածաշրջանում խաղաղությանն ու կայունությանը: Եռակողմ հանդիպման ավարտից հետո, անցկացվեցին Ռուսաստանի նախագահի վարչապետ Պուտինի առանձին հանդիպումները ինչպես Նիկոլ Փաշինյանի, այնպես էլ՝ Իլհամ Ալիևի հետ:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ԼԵՎԱՆ ԴՎԻԹԱՇՎԻԼԻ. «ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ 50 ՀԱՉԱՐ ԱՆԱՊԱՀՈՎ ԲԱՂԱՔԱՅՈՒ ԿՕԳՆԻ ԱՇԽԱՏԱՆՔ ԳՏՆԵԼՈՒ ՀԱՐՅՈՒՄ»

Սոցիալապես անապահով աշխատունակ քաղաքացիներին աշխատանքով ապահովելու նպատակով կառավարության կողմից ստեղծված աշխատանքային խմբի ղեկավար, Վրաստանի փոխվարչապետ, բնապահպանության և գյուղատնտեսության նախարար Լեւան Դավիթաշվիլին հայտարարեց, որ կառավարությունը աշխատատեղ կտրամադրի սոցիալապես անապահով առնվազն 50 հազար մարդու:



նություն վճարել: Նախաձեռնությունը օրենսդրական մակարդակով կձեռնարկվի հաջորդ տարվա սկզբին, - նշեց փոխվարչապետը և հավելեց, որ ծրագրի էությունը ոչ թե բյուջետային ծախսերի խնայողությունն է, (Շարունակությունը՝ 2-րդ էջում)

- 2022 թվականին մենք աշխատանքի կտեղավորենք առնվազն 50 հազար մարդու: Թեև հավանուտ պլանն ավելի շատ է նախատեսում: Հուսով եմ, որ մենք կկարողանանք գործընթացին միացնել սոցիալապես անապահով աշխատունակ ողջ բնակչությանը: Նրանց կարող է վարձել ինչպես մասնավոր, այնպես էլ՝ պետական սեկտորը, - հայտարարեց Լեւան Դավիթաշվիլին և հավելեց, որ մասնավոր հատվածում աշխատուժի պահանջարկը բավականին բարձր է, թեկուզ նույն այդ գյուղատնտեսության բնագավառում, թեպետ հայցորդները շատ դեպքերում իրաժարվում են աշխատել՝ վախենալով կորցնել սոցիալապես անապահովի կարգավիճակն ու պետական նպաստը:

- Իսկ նոր ծրագիրը նրանց ապահովագրում է դրանից: Օրինակ, այն քաղաքացիներին, որոնց վարձել են սեզոնային աշխատանքի, սեզոնի ավարտից պետությունը կշարունակի սնուցումը:

«ՎՐԱՍՏԱՆԸ» 100 ՏԱՐԵԿԱՆ Ե

ԱՅԴՊԵՆ ԵՆ ՇԱՐՈՒՆԱԿԵՔ ԶԵՐ ՇՆՈՐՀԱԿԱԼ ԳՈՐԾԸ



Վրաստանում լույս տեսնող «Վրաստան» հայալեզու թերթը մեր երկրի հիմնավոր պարբերականներից մեկն է: Նա նշում է իր մեկդարյա հոբելյանը: Դա արժանավոր պարբերականի պանծալի հոբելյանն է: Դժվար է մեկ բառով բնութագրել «Վրաստանի» ծառայությունը մեր ընդհանուր հայրենիքի Վրաստանի զարգացման ու առաջընթացի գործում: Առանձնակի նշանակալի է թերթի գործունեությունը Վրաստանի ազգությանը հայ քաղաքացիների երկրի քաղաքական, սոցիալ-տնտեսական (Շարունակությունը՝ 5-րդ էջում)

ՀԻՄԱ, ԵՐԲ ԳՏԵԼ ԵՄ «ՎՐԱՍՏԱՆԸ», ԱՅԼԵՎՍ ԲԱՑ ԶԵՆ ԹՈՂՆԵԼՈՒ

Երբ օրվա իրադարձություններին ծանոթանալու համար «Վորդիում էի» ֆեյսբուքը, հանկարծ հանդիպեցի «Վրաստան» թերթի մասին Գայանե Բոստանջյանի գրառմանը: Ես Հայաստանի Տաշիրի շրջանի Կաթնառատ գյուղից եմ, ամուսնացել ու բնակություն եմ հաստատել ամուսնուս մոտ՝ Վրաստանի Կախեթի երկրամասի կենտրոն արեաշող Թելավի քաղաքում: Արդեն չորս տարի այստեղ եմ ապրում՝ կարոտելով Հայաստանի յուրաքանչյուր կրպակուն հանդիպող հայատառ թերթերի կապոցները, գրախանութները: (Շարունակությունը՝ 5-րդ էջում)



Երբ օրվա իրադարձություններին ծանոթանալու համար «Վորդիում էի» ֆեյսբուքը, հանկարծ հանդիպեցի «Վրաստան» թերթի մասին Գայանե Բոստանջյանի գրառմանը: Ես Հայաստանի Տաշիրի շրջանի Կաթնառատ գյուղից եմ, ամուսնացել ու բնակություն եմ հաստատել ամուսնուս մոտ՝ Վրաստանի Կախեթի երկրամասի կենտրոն արեաշող Թելավի քաղաքում: Արդեն չորս տարի այստեղ եմ ապրում՝ կարոտելով Հայաստանի յուրաքանչյուր կրպակուն հանդիպող հայատառ թերթերի կապոցները, գրախանութները: (Շարունակությունը՝ 5-րդ էջում)

COVID - 19

ԱՄԻՐԱՆ ԳԱՄՂԵԼԻՉԵ. «ՊԱՏՎԱՍՏՄԱՆ ՄԱԿԱՐԳԱԿԸ ՇԵՌՈՒ Ե ԲԱՎԱՐԱՐ ԼԻՆԵԼՈՒՅ՝

ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՄԻՑ ՄԱՅՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՎՈՎ ՎՐԱՍՏԱՆՆ ԱՌԱՋԻՆ Ե ԱՇԽԱՐՀՈՒՄ

Վրաստանի հիվանդությունների վերահսկման ազգային կենտրոնի գլխավոր տնօրեն Ամիրան Գամդրելիձեն բնակչությանը կրկին անգամ կոչ արեց հնարավորինս արկտիվացնել պատվաստման գործընթացը:



Մասնագետի համոզմամբ, պատվաստումը կորոնավիրուսով պայմանավորված բարդ իրավիճակի կարգավորման միակ ուղին է: - Կորոնավիրուսի տարածման վճարագրությունն ավելի քան տազնապալի է: Օրական ունենում ենք վարակման շուրջ հինգ հազար նոր դեպք: Տազնապալի թվեր են գրանցում մահացությունների օրական թիվը: Բժշկական հաստատությունները գործում են գերծանրաբեռնված պայմանակարգով: Իրավիճակի կարգավորման միակ ուղին շարունակում է մնալ պատվաստումների ակտիվացումը, ինչպես նաև տրված հանձնարարականների, մասնավորապես՝ դիմակները կրելու հանձնարարականի խստիվ կատարումը, - հայտարարեց Ամիրան Գամդրելիձեն: (Շարունակությունը՝ 6-րդ էջում)

ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ ՆՎԱԶՈՒՄ Ե ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՄԻ ՏԱՐԱԾՄԱՆ ՑՈՒՑԱՆԻՇԸ

Վրաստանի կրթության նախարարության տվյալներով, Վրաստանում զգալի նվազել է հեռավար ուսուցման անցած դպրոցների և առանձին դասարանների թիվը:

Գերատեսչության տվյալների համաձայն, նոյեմբերի 26-ի դրությամբ, հեռավար ուսուցմամբ գործում է 137 դպրոց և 358 առանձին դասարան: Դպրոցական տարածքում ուսուցման վերսկսումից ի վեր, ողջ Վրաստանում շիսկային խմբի 147 ուսուցիչներ դասավանդում են հեռավար: Երրորդ շաբաթն է՝ դպրոցներում կորոնավիրուսի տարածման ցուցանիշը նվազում է: Վերջին

յոթ օրվա ընթացքում կորոնավիրուս է հայտնաբերվել ուսուցիչների 0,7 տոկոսի և աշակերտների 0,3 տոկոսի մոտ: Այս փուլում պատվաստված է ուսուցիչների և դպրոցի տնօրինության ներկայացուցիչների 70,9 տոկոսը: Վրաստանի կրթության և գիտության նախարարությունը տարբեր ուղղություններով ակտիվ աշխատում է դպրոցներում Covid-19 վիրուսի կանխարգելման ուղղությամբ:

ԷԿՈՆՈՄԻԿԱ

ԻՐԱԿԻ ԴԱՐԻՔԱՇՎԻԼԻ. «2022 ԹՎԱԿԱՆԻՆ ՀԱՄԱԽԱՌՆ ՆԵՐՔԻՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԸ ԿԿԱԶՄԻ ՌԵԿՈՐԴԱՅԻՆ՝ 65 ՄԻԼԻԱՐԴ ԼԱՐԻ»

Նոյեմբերի 22-ի կառավարության նիստում Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին, հանրագումարելով անցած ժամանակահատվածի տնտեսական արդյունքները, հայտարարեց, որ տնտեսական աճի տեմպերը խոստումնալից են, տնտեսությունը վերականգնվում է շատ արագ տեմպերով:

- 2022 թվականի հունվարին համախառն ներքին արտադրանքը (ՀՆԱ) կկազմի 65 մլրդ լարի, եւ սա կլինի պատմական առավելագույնը: Մեկ շնչի հաշվով այն կկազմի շուրջ 5 500 դոլար, ինչը նույնպես պատմական առավելագույնն է: Հիշեցնենք, որ առաջին ինն ամիսներին տնտեսական աճը կազմել է 11 տոկոս, ինչը աննախադեպ աճ է ողջ տարածաշրջանում եւ Եվրոպայում,- հայտարարեց վարչապետը եւ հավելեց, որ արժույթի միջազգային հիմնադրամի կանխատեսումների համաձայն, Վրաստանն առաջիկա հինգ տարում կունենա ամենաբարձր տնտեսական աճը տարածաշրջանում եւ Եվրոպական երկրներում:

- Մենք սկսել ենք նաեւ նոր ծրագրեր պատրաստել, օրինակ «Արտադրող Վրաստան»:


տանում», գյուղատնտեսության ոլորտում ունենք շատ լուրջ, հավակնոտ ծրագրեր, որոնց մի մասն արդեն սկսել ենք եւ հունվարից ընդլայնելու ենք այդ ծրագրերը,- ասաց Իրակլի Դարիբաշվիլին:

Վարչապետի խոսքով, զբոսաշրջության ոլորտում կլինեն նոր նախագծեր ու նախաձեռնություններ:

- Մի քանի շաբաթից հանդես կգան նախաձեռնությամբ, մենք ակտիվ աշխատում ենք էկոնոմիկայի նախարարության հետ զբոսաշրջության ոլորտում, նոր զբոսաշրջային վայրեր ստեղծելու ուղղությամբ, արտադրության խթանման ուղղությամբ, գյուղատնտեսության ոլորտում, ներկայացնելու ենք լայնածավալ ծրագրեր ու նախաձեռնություններ:



Մեր հիմնական մտահոգությունը պետք է լինի աշխատատեղերի ստեղծումը, աղքատության հաղթահարումը, եւ դա պետք է լինի մեր ընդհանուր ազգային խնդիրն ու մեր երկրի միավորումը: Մենք բոլորս պետք է միասին աշխատենք այս երեք հիմնական գաղափարների շուրջ,- հայտարարեց Իրակլի Դարիբաշվիլին:



ԳԵՐՄԱՆԻԱ

ԱՆԳԵԼԱ ՄԵՐԿԵԼԻՆ ԿՓՈՒՄՐԻՆԻ ՕԼԱՖ ՇՈՒՑԸ

Գերմանիայի սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը, «Կանաչները» եւ Ազատ դեմոկրատական կուսակցությունը վերջնականապես համաձայնեցրել են կոալիցիոն պայմանագիրը, որը տեղ է գտնելու երկրի ապագա կառավարության աշխատանքի հիմքում:

Գերմանիայի Բունդեսթագի նիստը, որտեղ սոցիալ-դեմոկրատ Օլաֆ Շուլցն ընտրվելու է երկրի նոր կանցլերի պաշտոնում, տեղի կունենա ոչ ուշ, քան դեկտեմբերի 8-ը:

Այդպիսով, Անգելա Մերկելը պաշտոնավարման ժամկետով չի գերազանցի Հելմուտ Կոլի ռեկորդը, ով դեկավարել է կառավարությունը 5869 օր՝ 1982 թվականի հոկտեմբերի 1-ից մինչև 1998 թվականի հոկտեմբերի 26-ը: Ռեկորդը գերազանցելու համար Մերկելին հարկավոր էր պաշտոնում մնալ մինչև դեկտեմբերի 17-ը:

ԹՈՒՐԻԱ

ԲՈՂՈՔԻ ՑՈՒՅՑԵՐ՝ ԵՐՂՈՂԱՆԻ ՀՐԱՄԱՐԱԿԱՆ ԴԱՐՄԱՋՈՎ

Թուրքիայում օրեցօր խորացող տնտեսական ճգնաժամը, լիրայի ռեկորդային անկումն ու գների սրընթաց աճը Անկարայում, Ստամբուլում եւ Իզմիրում, հանգեցրին բողոքի ցույցերի՝ նախագահ Երդդանի եւ կառավարության հրաժարականի պահանջով:

Մարդիկ դժգոհ են, որ լիրան փլուզվել է ամերիկյան դոլարի նկատմամբ: Նոյեմբերի 26-ի երեկոյան 13,4 լիրա է տրվել մեկ դոլարի դիմաց:

Ազգային արժույթի ռեկորդային անկումից հետո, մարդիկ վախենում են սննդամթերքի գների աճից:

Երկրի առաջ ծառայած տնտեսական լուրջ խնդիրներն ու բարձրացող բողոքի ծայրերը օրակարգ են բերել արտահերթ ընտրությունների անցկացման հարցը:

Հիշեցնենք, որ հերթական խորհրդարանական եւ նախագահական ընտրությունները Թուրքիայում պետք է կայանան 2023-ի հունիսին:

ԷԿՐԱՆՆԵԳՐՈՒՄ

ԻՐԱԿԻ ԿՈՐԱԽՆԻՉԵ. «ՄԵՐ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾՆԿԵՐՆԵՐԻ ՑԱՆԿՈՒԹՅՈՒՆՆ Է ՆՎԱԶԵՑՆԵԼ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԵՎԵՌԱԿԱՆԱՑՈՒՄԸ»



Կառավարող «Վրացական երազանք» կուսակցության պատվիրակությունը՝ կուսակցության նախագահ Իրակլի Կորեախիձեի գլխավորությամբ, աշխատանքային այցով գտնվում է Ատրասբուրգում:

Վրաստանի պատվիրակները հանդիպումներ են անցկացնում Եվրամիության պաշտոնյաների, Եվրախորհրդարանի պատգամավորների հետ: Հանդիպումներում գլխավոր ուշադրությունը բեռնակազմակերպության է Վրաստանի ներքին քաղաքական իրավիճակի, նախկին նախագահ Սիլվեստրի Սասկաշվիլու ձեռքարկության, նրա կողմից հայտարարած հացադուլի, նրան զինվորական հոսպիտալ տեղափոխելու, երկրում հաստատված

քաղաքական բեռնակազմակերպության, հաղթահարման ուղիների, ինչպես նաեւ կորոնավիրուսի համավարակի պայմաններում իրականացվելիք անհրաժեշտ միջոցառումների վրա:

- Մենք խոսել ենք ներքաղաքականին առնչվող բոլոր թեմաների մասին, այդ թվում՝ Սասկաշվիլու, նրա տեղափոխման, հացադուլի հետ կապված: Մենք քննարկեցինք ներքաղաքական զարգացման հեռանկարները, ինչպես նաեւ մենք տեսնում ենք ներքին քաղաքականության զարգացումը:

Մենք ցանկանում ենք, որ մեր բոլոր ընկերները՝ միջազգային գործընկերները աջակցեն մեզ, բեռնակազմակերպության մակարդակը նվազեցնելու մեջ եւ համապատասխան քայլեր ձեռնարկել,- հայտարարեց Իրակլի Կորեախիձեն:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ԼԵՎԱՆ ԴՎՎԻԹԱՇՎԻԼԻ. «ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ 50 ՀԱՉԱՐ ԱՆԱԴԱՂՈՎ ՔԱՂԱՔԱՅՈՒ ԿՕԳՆԻ ԱՇԽԱՏԱՆՔ ԳՏՆԵԼՈՒ ՀԱՐՅՈՒՄ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

որոնք ծախսվում են սոցիալական օգնության վրա, այլ դրանց ավելի ճիշտ օգտագործումը:

Հիշեցնենք, որ սոցիալապես անա-

պահով քաղաքացիների մասնագիտական նախապատրաստման եւ աշխատանքի տեղավորման վերաբերյալ բարեփոխման մասին ազդարարել է Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին: Վարչապետի խոսքով, այսօրվա

դրությամբ Վրաստանում ավելի քան 600 հազար քաղաքացի սոցիալապես անապահով է: Ցավոք, այստեղից շուրջ 200 հազարը՝ աշխատունակ, բայց չի աշխատում՝ վախենալով կորցնել պետական նպաստը:

ԽՈՐՀՐԴԱՐԱՆ

ԻՆՉՊԵՆ ԿՇԱՐՈՒՆԱԿՎԻ ՕՐԵՆՍԱԴՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹՅՈՒՆԸ ՈՐ ԿՈՒՄԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԴԱՎՐԵՅՐԵՅ, ԵՎ ՌՎ Է ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ԲՈՅԿՈՑԸ

Ինչպես արդեն հաղորդել ենք, խորհրդարանի ընդդիմադիր պատգամավորները հրաժարվում էին մասնակցել օրենսդիր գործունեությանը եւ, որպես պահանջ, ներկայացնում էին Սիլվեստրի Սասկաշվիլու բանտային հիվանդանոցից այլ հիվանդանոց տեղափոխելու պահանջը:

Ինչպես հայտնի է, նոյեմբերի 19-ին, Վրաստանի արդարադատության նախարարության առաջարկությամբ եւ նախկին նախագահի համաձայնությամբ, հացադուլի դադարեցման պարտադիր պայմանով, Սիլվեստրի Սասկաշվիլին Գլխամիտի թիվ 18 քրեակատարողական հաստատությունից տեղափոխվեց Գորիի զինվորական հոսպիտալ: Այդ տեղափոխումը փաստորեն վերացնելու էր ընդդիմադիր պատգամավորների կողմից խորհրդարանի աշխատանքի բոյկոտումը: Ինչպես պարզվեց քիչ ուշ, «Միասնական ազգային շարժումը» այրուհանդերձ դադարեցրեց բոյկոտը եւ հայտարարեց, որ կմասնակցի միայն սահմանադրական փոփոխությունների քննարկմանն ու քվեարկությանը: Ինչ վերաբերում է «Լեյն-գործընկերությունը հանուն Վրաստանի» կուսակցությանը, ապա այն դադարեցնում է բոյկոտը եւ խորհրդարանական խմբակցության տեսքով կաշխատի

տի օրենսդիր մարմնում:

Ինչպես արդեն նշեցինք, «Միասնական ազգային շարժման» պատգամավորները մտադիր են մասնակցել միայն սահմանադրական փոփոխությունների քննարկմանն ու քվեարկությանը: Խորհրդարանում այդ կուսակցության ղեկավար Խատիա Դեկանոիձեի խոսքով, ազգայնական պատգամավորները կմասնակցեն միայն այն հարցի քննարկմանը, որը նախատեսում է ամբողջական համամասնական խորհրդարանական համակարգին:

«Ռազմավարությունը՝ շինարար» կուսակցության նախագահ Գիորգի Վաշաձեի համոզմամբ, ընդդիմությունը պետք է օգտագործի բոլոր հնարավոր լծակները նպատակներին հասնելու համար: Խոսքը վերաբերում է ինչպես խորհրդարանական, այնպես էլ՝ ոչ խորհրդարանական մեխանիզմներին:

- Մենք՝ որպես խմբակցություն, երբեք

չենք հրաժարվել խորհրդարանական աշխատանքից եւ մասնակցում ենք ինչպես խորհրդարանի կոմիտեների աշխատանքին, այնպես էլ՝ լիազուար նիստերին,- հայտարարեց Գիորգի Վաշաձեն:

Կառավարող «Վրացական երազանք» կուսակցությունում նշեցին, որ սահմանադրական աշխատանքին մասնակցությունից հրաժարվելը, ինչպես նաեւ առանձին պատգամավորների կողմից իրենց պատգամավորական լիազորների չեղարկումը փորձ է օրենսդրական գործունեության սաբոտաժի: Խորհրդարանի փոխխոսնակ Դավիթ Սերգենկոյի կարծիքով, բոլոր գործողությունները պետք է ուղղված լինեն ինչ-որ նպատակի, որով եւ կարելի է արդարացնել ընտրողների մանդատը:

- Բոյկոտի դադարեցումը եւ որոշ ընդդիմադիր կուսակցությունների պատգամավորների խորհրդարան վերադառնալը, բնականաբար, ողջունելի է: Քանի որ խորհրդարանն այն միակ վայրն է, որտեղ հնարավոր է նպաստել բարօրության համար ընդունվող որոշումներին,- հայտարարեց Դավիթ Սերգենկոն:



- Ընթացակարգի համաձայն, ընդդիմության գործողությունները կարելի է համարել բոյկոտ, թեեւ դա իրականում սաբոտաժ է երկրի նկատմամբ: Մոտ ժամանակներում մտադիր ենք քննարկել այնպիսի թեմաներ, ինչպիսիք են ազգային անվտանգության հիմնադրույթը, կիրառված անվտանգության թեման, հիբրիդային մարտահրավերների եւ սպառնալիքների թեման, ֆերմերների օգնության ու երկրի համար նշանակալից տարբեր թեմաներ, եւ այդ հարցերին ընդդիմությունը մասնակցելու ցանկություն չի արտահայտում,- հայտարարեց Վրաստանի խորհրդարանի նախագահի առաջին տեղակալ Գիա Վոլսկին:

ՄԻՍՈՆ ԿԻԼԱՉԵ

Շաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԳՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ՆՈՐ ԾՐԱԳԻՐ

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌՑԱՆՑ ԶԱՆԴԻՊՈՒՄԸ՝ ԱՐԺՈՒՅԹԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԻՄՆԱԴՐԱՄԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ ԴԵՏ


Նոյեմբերի 24-ին Վրաստանի էկոնոմիկայի եւ կայուն զարգացման նախարար Նաթիա Թուր-նավան ընդհանուր մեկնարկի կապակցությամբ առցանց համոզիպում ունեցավ Արժույթի միջազգային հիմնադրամի ղեկավար Ջեյմս Ջոնի եւ առաքելության այլ անդամների հետ:

Հանդիպմանը նախարարը մանրամասն խոսեց երկրի տնտեսության միտումների, կորոնավիրուսի համավարակի ազդեցության եւ կառավարության հակաճգնաժամային քաղաքականության մասին նշելով, որ երկրի տնտեսությունը սպասվածից ավելի արագ է զարգացել: Արդյունքում, ըստ նախնական գնահատականների, տնտեսության իրական աճը այս տարվա սեպտեմբերին, նախորդ տարվա համեմատ, կազմել է 6,9, իսկ իննամսյա աճը՝ 11,0 տոկոս:

Նաթիա Թուրնավանի խոսքով, հաշվի առնելով տնտեսության ներկայիս միտումները՝ Վրաստանի կառավարությունն ակնկալում է, որ 2021 թվականը կավարտվի երկնիշ տնտեսական աճով: Նախարարը մեջբերել է նաեւ Արժույթի միջազգա-

յին հիմնադրամի գնահատականը, ըստ որի, 2021-2026 թվականներին Վրաստանը կունենա ամենաբարձր տնտեսական աճը տարածաշրջանի եւ եվրոպական երկրներից:

Հանդիպմանը ուշադրության կենտրոնում են եղել երկրի տնտեսության վերականգնման հեռանկարները: Զրույցի ընթացքում քննարկվել են ներդրումային միջավայրի բարելավմանն ուղղված քայլերը, էներգետիկայի ոլորտի ընթացիկ եւ ապագա բարեփոխումները:



ՆՈՅԵՄԵՐԻ 23-ԻՆ՝ ԳԻՐԳՈՐԱ



Նոյեմբերի 23-ին Վրաստանը նշեց Սուրբ Գիորգիի տոնը՝ Գիորգոբան, որին նվիրված տոնական պատարագներն անցկացվեցին երկրի բոլոր գործող եկեղեցիներում: Սուրբ Գիորգին, ինչպես եւ Աստվածամայրը, Վրաստանի երկնային հովանավորն է: Վրաց Ուղղափառ եկեղեցին նշում է Սուրբ Գիորգիի տոնը տարվա մեջ երկու անգամ՝ Նոյեմբերի 23-ին (Սուրբ Մատթեոսի Գիորգիի մահապատիժը) եւ մայիսի 6-ին (Սուրբ Գիորգիի գլխատումը): Նոյեմբերի 23-ի տոնը ունի պետական տոնի եւ ոչ աշխատանքային օրվա կարգավիճակ:

Սուրբ Գիորգիի պատվին առաջին եկեղեցին կառուցվել է Վրաստանում 335 թվականին: 9-րդ դարից սկսած Սուրբ Գիորգիի պատվին եկեղեցիների ու մատուռների կառուցումը զանգվածային է դարձել: Միջնադարում Սրբի անունով երկրի տարբեր անկյուններում կառուցվել է 365 մատուռ՝ ըստ տարվա օրերի:

ԳՆԱԾԸ ԿԱԶՄԵԼ Է 12,8 ՏՈՒԿՈՍ

Վրաստանի Ազգային վիճակագրական ծառայության տվյալներով, 2021 թվականի հոկտեմբերին, նախորդ ամսվա համեմատ, Վրաստանում գնաճը կազմել է 1,3 տոկոս, իսկ տարեկան գնաճը՝ 12,8 տոկոս:

Գներն աճել են հետևյալ ենթախմբերում՝ բանջարեղեն եւ այգեգործություն (9,0 տոկոս), հաց եւ հացաբուլկեղեն (5,5 տոկոս), ձուկ (4,2 տոկոս), կաթ, պանիր եւ ձու (3,6 տոկոս), շաքարավազ, մուրաբա եւ այլ քաղցրավենիք (1,2 տոկոս):

Միեւնույն ժամանակ նվազել են մրգի եւ խաղողի գները (-1,1 տոկոս): Հագուստ եւ կոշիկ խմբում գներն աճել են 9,2 տոկոսով՝ արտադրվելով ամսական գնաճի 0,29 տոկոսային աճը: Թանկացել են ինչպես կոշիկի (17,8 տոկոս), այնպես էլ՝ հագուստի (3,7 տոկոս) գները:

ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ

ԿԱՆՍԱԿԱՆՁԵ. «ԵՍ ՊԱՏՐԱՍ ԵՄ ԶԱՄԱԳՈՐԾԱԿՑԵԼ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՍԱԿՐԵՐՈՒԼՈՅԻ ԴԵՏ»



Թբիլիսիի քաղաքապետ Կախա Կալաձեն հայտարարեց, որ ինքը պատրաստ է համագործակցել Թբիլիսիի քաղաքային սակրեբուլո մտած բոլոր կուսակցությունների հետ:

Նրա խոսքով, համագործակցության համար պատրաստ էր նաեւ 2017 թվականին, փոխարենն ընդդիմությունը սկսեց քաղաքական շոուներ կազմակերպել:

- 2017 թվականին, եթե հիշում եք, ես հայտարարեցի, որ պատրաստ եմ համագործակցության եւ իսկապես սկսել էի այդ համագործակցությունը: Քաղաքային կառավարության նիստերին մասնակցում էին ընդդիմադիր թիմի ներկայացուցիչներ, սակայն, կարճ ժամանակ անց, քաղաքական գործիչները սկսեցին կազմակերպել քաղաքական շոուներ: Մենք դրա համար, բնական է, անհիմաստ ժամանակ վատնելու մտադրություն

չունեինք, քանի որ հավաքել էինք գործի ու կոնկրետ որոշումների համար, եւ այդ հարաբերություններն անմիջապես խզվեցին,- ասաց Կախա Կալաձեն:

Թբիլիսիի քաղաքապետի խոսքով, իր թիմակիցները նույնպես պատրաստ են համագործակցության:

- Ես պատրաստ եմ համագործակցել քաղաքային խորհրդում (սակրեբուլո) ներկայացված բոլոր քաղաքական կուսակցությունների հետ, ինչպես նաեւ պատրաստ եմ իմ թիմակիցները միասին շատ գործեր անել: Մի՞թե սա իմ միակ անելիքը չէ: Նրանք նաեւ համայնքի աջակցությունն ունեն: Կլինի առավելագույն համագործակցություն,- հայտարարեց Կախա Կալաձեն:

ՉՈՒՐԱՔ ԱԲԱՇԻՉԵ. «ՎՐԱՑԱԿԱՆ ԿՈՂՄԸ ԶԻ ՔՆՆԱՐԿՈՒՄ «3+3» ԶԵՎԱԶԱՓԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԶԱՐՑԸ»

Նոյեմբերի 24-ին վրաց-ռուսական ոչ պաշտոնական երկխոսության շրջանակներում տեղի է ունեցել Ռուսաստանի Դաշնության հետ հարաբերությունների հարցերով Վրաստանի վարչապետի պաշտոնական ներկայացուցիչ Ջուրաբ Աբաշիձեի առցանց ձեռնարկով համոզիպումը ՌԴ արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահ Գրիգորի Կարասինի հետ:

Հանդիպմանը ռուսական կողմը հետաքրքրվել է, թե ինչպես է վրացական կողմը վերաբերվում տարածաշրջանա-

յին խորհրդակցությունների նոր մեխանիզմին եւ այս համատեքստում նախատեսված միջոցառումներին, ինչին ի պա-

տասխան Ջուրաբ Աբաշիձեն ասել է, որ վրացական կողմը չի քննարկում «3+3» ձեռնարկին մասնակցելու հարցը:

Հիշեցնենք, որ «3+3» ձեռնարկը ենթադրում է Կովկասյան տարածաշրջանի երկրների միջեւ համագործակցություն, որտեղ միավորված են Թուրքիան, Ռուսաստանի Դաշնությունը, Իրանի Իսլամական Հանրապետու-

թյունը, Ադրբեջանը, Հայաստանը եւ Վրաստանը:

Հարկ է նշել, որ Վրաստանը ձեռնարկի մասին քննարկումների մեկնարկից ի վեր դեմ է արտահայտվում որեւէ ձեռնարկի ներդրման հարցին, շեշտելով վրաց-ռուսական հարաբերություններն ու Ռուսաստանի կողմից Վրաստանի տարածքների բռնազավթումը:

ԹԱՏՐՈՆ

ԴԻՄՈՒՆ ՏԱՐԻ ԱՆՑ ԿՐԿԻՆ՝ «ԾԱՌԵՐԸ ԿԱՆԳՆԱԾ ԵՆ ՄԱՅԱՆՈՒՄ»

Նոյեմբերի 23-ին Թբիլիսիի Պետրոս Ադամյանի անվան պետական հայկական դրամատիկական թատրոնը Նոդար Դումբաձեի անվան Պատանի հանդիսատեսի թատրոնում բեմադրեց հայտնի իսպանացի դրամատուրգ Ալեխանդրո Կաստանյի (1903-1965) «Ծառերը կանգնած են մահանում» պիեսը:

Ըստ թատերագետների, այս պիեսը 20-րդ դարի երկրորդ կեսի համաշխարհային թատերգության բարդագույն ստեղծագործություններից է: Եվ չնայած, որ ներկայացվել է աշխարհի թատրոնների շատ բեմերում, շարունակում է արդիական մնալ պահանջելով թե՛ ռեժիսորական մեծ արվեստ, թե՛ դերասանական բարձր վարպետություն: Պիեսն արժարժում է մարդկային հոգիներում տեղի ունեցող հոգեբանական բարդ խնդրումները, չարի եւ բարու պայքարը...

Ադամյանական բեմում «Ծառերը կանգնած են մահանում» պիեսն առաջին անգամ բեմադրել է գրեթե կես դար առաջ՝ 1972 թվականին, ռեժիսոր Միքայել Գրիգորյանը (1940-2020), ուր վերջինս հանդես է եկել նաեւ Մաուրիսիոյի դերում: Գովելի է, որ այժմ ներկայացվում կրկին վերաբեմադրեց թատրոնի երիտասարդ բեմադրիչ, 42-ամյա Գագիկ Մելքունյանը:

Իրականում երեք գործողությունից բաղկացած եւ հետեւաբար մոտ 3,5 ժամ տևող ներկայացումը բեմադրիչը փորձել է սեղմել մատուցելով առավել կարճ ժամանակահատվածում՝ ընդամենը 1 գործողությամբ:

Ներկայացման մեջ ընդգրկված են ադամյանցիների ինչպես ավագ սերնդի ներկայացուցիչներ էլեոնորա Օհանյանը (Տատիկի դերակատար) եւ Ֆելիքս Խաչատրյանը (Քալբուս), այնպես էլ երիտասարդ դերասաններ Մարիաննա Սահակյանը (Մարթա), Հենրիխ Պետրոսյանը (Ֆերնանդո-Մաուրիսիո), Հայկուհի Շահբազյանը (Հենովյես): Փոքրիկ Մաուրիսիոյի դերում հանդես եկավ Թբիլիսիի թիվ 104 դպրոցի երկրորդ դասարանի սան Յանա Մելքունյանը, Գագիկ Մելքունյանի դուստրը:

Բեմադրության նկարչական ձեւավորումը Աննա Սոփրոնյանի է, նկարիչ-

կատարող՝ Ալեքսանդր Ցվետկովը, երաժշտական ձեւավորումը՝ Քրիստինե Էլոյանը, իսկ պարերը դրվել են Նինա Կերվալիշվիլու կողմից:

Նշենք, որ Ա.Կաստանյան պիեսը գրել է 1949 թվականին եւ մույն թվականին էլ առաջին անգամ բեմադրվել է Բուենոս Այրեսի դրամատիկական թատրոնում:

1957 թվականին պիեսը բեմադրել է Երեւանի Գաբրիել Սունդուկյանի անվան ակադեմիական թատրոնում ռեժիսոր Ալբերտ Մկրտչյանը (1937-2018), որտեղ Տատիկի դերում իր անզուգական խաղով հանդես է եկել Թբիլիսիում ծնված մեր հայրենակցուհի ու հայ թատրոնի հռչակավոր դերասանուհի Օլգա Գուլազյանը (1885-1970):

Ինչպես պատմում են ականատեսները, վրաց հանճարեղ դերասանուհի Վերիկո Անջափարիձեն (1897-1987), լինելով Երեւանում եւ տպավորված Գուլազյանի խաղով, ցանկություն է հայտնել հանդես գալ մույն դերում: Սեկ տարի անց, Թբիլիսիի Կ.Մարջանիշվիլու անվան թատրոնի բեմին հանդիսատեսը վայելեց լեզանդար դերասանուհու փայլուն խաղը



Տատիկի դերում:

Մեր ընթերցողին հիշեցնենք, որ վիրահայոց բեմում անցած դարի 70-ական թվականներին պիեսում խաղում էին այնպիսի հզորներ, ինչպիսիք էին Վրաստանի ժողովրդական եւ Հայաստանի վաստակավոր արտիստներ Եմմա Ստեփանյանը (1915-1989) ու Դորի Ամիրբեկյանը (1905-1983): Այդ ներկայացման մեջ զբաղված էին նաեւ Վրաստանի ժողովրդական արտիստներ Սերիկ Շելոյանը (1924-2015) ու Սոս Սոսյանը (1928-2008):

ԱՐԵՎԻԿԱ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄ

ԱԽԱԼՔԱԼԱՔԻ ԵՎ ՆԻՆՈՑՄԻՆԴԱՅԻ ՄՈՒՆԻՑԻՊԱԼԻՏԵՏՆԵՐՈՒՄ ՆՇԱՆԱԿՎԵՑԻՆ ՔԱՂԱՔԱՊԵՏԵՐԻ ՏԵՂԱԿԱԼՆԵՐ

ԱԽԱԼՔԱԼԱՔԻ

Ինչպես արդեն հաղորդել ենք, հոկտեմբերի 2-ին տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններում Մելքոն Մակարյանն ընտրողների ձայների նշանակալի գերակշռությամբ 82 տոկոսով, ընտրվեց Ախալքալաքի քաղաքապետ:

Նոր քաղաքապետն իր պարտավորությունների կատարմանը ձեռնամուխ եղավ հոկտեմբերի 29-ին: Օրերս Ախալքալաքի մունիցիպալիտետի սակրեբուլոյի նիստում հաստատվեցին քաղաքապետի տեղակալների թեկնածությունները:



Թեյմուրազ Աճեղլիձե

Ախալքալաքի մունիցիպալիտետի քաղաքապետի առաջին տեղակալ է նշանակվել մասնագիտությամբ ճարտարապետ-դիզայներ, ճարտարապետ-վերականգնող, ծնունդով թբիլիսցի, 49-ամյա **Թեյմուրազ Աճեղլիձե**: 1997-2004 թվականներին աշխատել է Սամցխե-Ջավախեթի երկրամասի վեահսկիչ մարմիններում: Իսկ մինչև նոր նշանակումը, նա զբաղեցնում էր Ախալքալաքի մունիցիպալիտետի քաղաքապետարանի վերահսկման ծառայության պետի պաշտոնը:

Սակրեբուլոն հավանություն տվեց **Սկրտիչ Մղդեսյան**-ին փոխքաղաքապետի պաշտոնում նշանակման առաջարկությանը: Չեյաբինսկի ագրո-ինժեներական համալսարանի եւ Երեւանի Մ.Խորենացու անվան համալսարանի իրավաբանական ֆակուլտետի շրջանավարտ, 54-ամյա Մկրտիչ Մղդեսյանը մինչ այդ զբաղեցնում էր Ախալքալաքի քաղաքապետարանի ֆինանսական ծառայության ղեկավարի պաշտոնը:



Սկրտիչ Մղդեսյան

Ասկրեբուլոն քաղաքապետարանի աշխատակազմի ղեկավարի պաշտոնում հաստատեց **Վլադիմիր Յալոյանի** թեկնածությունը: Նա մինչ այդ հանդիսանում էր Ախալքալաքի քաղաքապետարանի տնտեսական զարգացման եւ գույքի կառավարման ծառայության պետը:

ՆԻՆՈՑՄԻՆԴԱ

Հոկտեմբերի սկզբներին տեղական ինքնակառավարման ընտրություններում Նինոծմինդայի մունիցիպալիտետի քաղաքապետարանի ղեկավարի համար պայքարում երկրորդ անգամ ընտրողների բացարձակ մեծամասնության (82,53 տոկոս) աջակցությամբ Անի Մոսոյանի ընտրությունը տեղական իշխանության նկատմամբ տեղական բնակչության վստահության ակնհայտ դրսևորում էր:

Եվ ահա նորից այդ պատասխանատու պաշտոնում ընտրված քաղաքապետը ձեւավորեց իր թիմը, որի օգնությամբ նա մտադիր է իրականացնել բոլոր այն խոստումները, որոնք նախընտրական ծրագրի շրջանակներում խոստացել է նինոծմինդացիներին:



Ալեքսանդր Միքելաձե

Ստանալով Նինոծմինդայի մունիցիպալիտետի սակրեբուլոյի պաշտպանությունը, մունիցիպալիտետի քաղաքապետի առաջին տեղակալ է նշանակվել **Ալեքսանդր Միքելաձե**, ով մինչ այդ, 2009 թվականից որպես փոխքաղաքապետ, աշխատում էր Նինոծմինդայի քաղաքապետարանում:

Մունիցիպալիտետի փոխքաղաքապետի պաշտոնում նշանակվեց **Արմեն Բոդյանը**, ով երկար տարիներ Սամցխե-Ջավախեթի տարածաշրջանի, մասնավորապես, Ախալքալաքի եւ Նինոծմինդայի ոստիկանության ղեկավարումն առաջին պաշտոններ էր զբաղեցնում:

Նինոծմինդայի մունիցիպալիտետի քաղաքապետարանի աշխատակազմի ղեկավար վերանշանակվեց **Սամսոն Փնջոյանը**:



Արմեն Բոդյան

ԸՆԹԱՑԻԿ ԵՎ ԱՊԱԳԱ ԾՐԱԳՐԵՐԻ ՔՆՆԱՐԿՈՒՄԸ ՍԱՄՑԽԵ-ՋԱՎԱԽԵԹԻ ԵՐԿՐԱՄԱՍԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Նոյեմբերի 23-ին Սամցխե-Ջավախեթի տարածաշրջանի պետական լիազոր-նահանգապետ Բեսիկ Ամիրանաշվիլին աշխատանքային հանդիպում անցկացրեց տարածաշրջանի մունիցիպալիտետների քաղաքապետների հետ: Հանդիպմանը մասնակցում էին նաեւ Ախալքալաքի եւ Նինոծմինդայի մունիցիպալիտետների քաղաքապետեր Մելքոն Մակարյանն ու Անի Մոսոյանը:

Հանդիպմանը քննարկվեցին ընթացիկ ենթակառուցվածքային նախագծեր, դրանց իրականացումը, համավարակի կառավարումը, տարածաշրջանում պատվաստումը խրախուսող արշավների կազմակերպումը, բնակչության իրազեկումը, ինչպես նաեւ մունիցիպալիտետների մասնակցությունը թվարկված ծրագրերում, ինչն էլ ավելի իրատեսական եւ իրատապ կդարձնի ծրագրված ենթակառուցվածքային նախագծերը: Քննարկվեցին նաեւ մունիցիպալային բյուջեների հաջորդ 2022 թվա-

կանի պլանավորման հիմնական ուղղությունները: Առանձնակի նշվեց բյուջեում առողջապահության եւ սոցիալական ոլորտների ծախսերի ստույգ հաշվարկման անհրաժեշտությունը:

Հանդիպմանը ներկա էին փոխնահանգապետ Շավվա Բերձեմիշվիլին, տարածաշրջանային նախագծերը համակարգող ծառայության ղեկավար Մարինա Գաչեչիլաձե, պետլիազորի վարչու-

թյան ղեկավար Գիորգի Միքելաձե, Սամցխե-Ջավախեթի մունիցիպալիտետների քաղաքապետերն ու նրանց տեղակալները:



ԳՈՐԾԱԴԻՐ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՐԵՆ, ԱՇԽԱՏԱՆՔ՝ ԱՇԽԱՏՈՒՆԱԿՆԵՐԻՆ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

անհանգստացնող են: Կոպիտ ասած, իրականում մեր գործող սոցիալական քաղաքականության շրջանակներում մենք մեր չափահաս, աշխատունակ բնակչության ընտելացրել ենք աղքատության, գործազրկության, անգործության: Փաստորեն, այսօր աշխատունակ, սոցիալապես անապահով քաղաքացուն մոտիվացված չէ նոր աշխատանք սկսել վախենալով, որ դրանից հետո պետությունը չի տրամադրի սոցիալական օգնություն: Տարրական կենսապայմանները բարելավելու մոտիվացիա չունեն, եւ սա աղետ է, անհանգստություն: Մենք՝ որպես կառավարություն, պետք է համարձակ, արդյունավետ քայլեր ձեռնարկենք:

- Այդ նպատակով ես արդեն գրույցներ եմ ունեցել կառավարության անդամների, տնտեսական թիմի հետ,- հայտարարեց վարչապետն ու հավելեց, որ մտադիր է ստեղծել աշխատանքային խումբ՝ փոխվարչապետ Լեւան Դավիթաշվիլու գլխավորությամբ, որն առաջիկա օրերին կներկայացնի նոր սոցիալական տեսլական, թե ինչ-

պես կարելի է արատավոր համակարգը փոխարինել նոր, առողջ համակարգով:

- Մենք կարող ենք հազարավոր եւ տասնյակ հազարավոր աշխատատեղեր ստեղծել յուրաքանչյուր քաղաքի, յուրաքանչյուր մունիցիպալիտետի համար: Առաջիկա մի քանի շաբաթների ընթացքում ներկայացնենք արդեն իսկ հաստատված ծրագիր, որը փորձարկվել է հաստատվել է հաջողակ եվրոպական երկրներում,- ընդգծեց վարչապետը:

Նրա խոսքով, քաղաքացիներն ընտելացել են աղքատությանն ու անգործությանը, այս իսկապես անտանելի վիճակին:

- Ունենք մոտ 600 000 սոցիալապես անապահով քաղաքացի, որից առնվազն 200 000-ը, եթե ոչ ավելին, աշխատունակ քաղաքացիներ են, ովքեր գործող սոցիալական քաղաքականության պատճառով չունեն աշխատանք փնտրելու շարժառիթ: Մենք բազմաթիվ օրինակներ գիտենք, որ եթե մարդը գնում է հեռուստացույց, առնարան, ուրեմն միավորներ է կորցնում, սոցիալական օգնությունը կորցնում է: Եթե շուկայում առկա է սեզոնային սոցիալա-

կան աշխատանք, նրանք շահագրգռված չեն միաժամանակ աշխատանք գտնելու եւ հավելյալ եկամուտ ստանալու հարցում: Ուրեմն, պետք է ճկուն համակարգ ստեղծել, որ քաղաքացին մի կողմից ստանա այն օգնությունը, որն այսօր ստանում են աշխատավարձի տեսքով, բայց կոնկրետ համայնքային գործունեության համար, իսկ մյուս կողմից՝ նոր աշխատանք սկսելու համար: Քաղաքացին պետք է անկաշկանդ լինի այդ հարցում, ունենա երկու-երեք աշխատատեղ եւ ավելի շատ գումար վաստակի ու անթաքույց գնի սառնարան, հեռուստացույց, վերանորոգի տունը, գնի նոր տուն եւ այլն: Սա պետք է լինի մեր գերխնդիրը, եւ մեծ ցանկություն ունենա հունվարից սկսել այս ծրագիրը, որը կարծում են, ամբողջությամբ կփոխադրվեն հարկաւորությունը: Պետք է մեր քաղաքացիներին սովորեցնել լիարժեք աշխատանքի: Համոզված եմ, որ նմանները ցանկանում են աշխատանք գտնել, բայց եթե պետությունը չի ստեղծում պայմաններ, ապա դա խոչընդոտ է նրանց ցանկությունն ու վերացնում շարժառիթը,- ասաց Իրակլի Դարիբաշվիլին:

էջը պատրաստեց ՅՈՒՐԻ ԽՈՐԵՆՅԱՆԸ

ԿՏՐՈՒԿ ՍԱՀՄԱՆԱՓՈՒԿՈՒՄՆԵՐ՝ ԱՌՉԱՆՉ ԽԱՂԱՏՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Նոյեմբերի 22-ի կառավարության նիստում Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին անդրադարձավ մոլախաղերի բիզնեսի եւ առցանց խաղատների թեմային՝ նշելով, որ հարկ է սահմանափակումներ ներդնել մասն ձեռներեցության գործունեության մեջ եւ առցանց խաղատների կապակցությամբ առաջին փուլում ավելացնել հարկերը, արգելել գովազդը, թույլտվության շեմը հասցնել մինչեւ 25 տարեկան, իսկ երկրորդ փուլում ընդհանրապես արգելել:

- Բնակչությանը մեծապես հուզող հարցը մոլախաղերի բիզնեսն ու առցանց խաղատներն են: Այս առցանց խաղատների միջոցով երկրից դուրս է հոսում մեկ միլիարդ հինգ հարյուր միլիոն լարի: Մեր քաղաքացիները, մեր երիտասարդներն ամեն օր խաղում են առցանց խաղատներում եւ հոսում են մեկ միլիարդ 500 մլն լարի: Ես այս մասին խոսել եմ տնտեսական թիմի հետ ու նաեւ ծանոթացել ֆինանսների նախարարի տեսլականին:

Կարծում ենք, որ ներկայացնում ենք օրենսդրական նախաձեռնություն, որի նպատակն է բարձրացնել հարկերն առցանց խաղատների սեփականատերերի հա-

մար: Դրանց ճնշող մեծամասնությունն արտասահմանյան ընկերություններ են:

Ցավալի է, որ դրանց մեծ մասը՝ 99 տոկոսը, աղքատներն են, չաշխատողները:

Առաջին փուլում կարծում ենք, որ պետք է ավելացնենք հարկերը, արգելենք գովազդը եւ շեմը բարձրացնենք մինչեւ 25 տարեկան: Երկրորդ փուլում առցանց խաղատները պետք է ընդհանրապես արգելվեն: Ես պատրաստ եմ բացահայտ խոսել այդ մասին, եւ հուսով եմ, որ համայնքն աջակցություն կլինի այս ուղղությամբ:

Մենք ակտիվ աշխատելու ենք խորհրդարանի հետ եւ միասին օպտիմալ, ողջամիտ որոշում կկայացնենք,- ասաց Իրակլի Դարիբաշվիլին: